«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիր
Փոքր դրամաշնորհների հայտի ձև

Ծրագրի անվանումը	«ՓՄՁ հանրության համախմբում տեսչական գործընթացներում կոռուպցիոն դրսևորումների դեմ»
Կոնտակտային անձ և կոնտակտային տվյալներ	Գայանե Պողոսյան, տնօրեն Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամ ք. Երևան, Տիգրան Մեծի 4 Հեռ/Ֆաքս: 56 24 00 Էլ.փոստ. inbox@fsmb.am
Ծրագրի իրականացման վայրը (մարզ, համայնք)	ք.Երևան, Տավուշի և Վայոց Ձորի մարզեր
Ծրագրի տևողությունը	3 ամիս
Ծրագրի հակիրճ նկարագիրը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է. • հարցման միջոցով պարզել գործարար հանրության կարծիքը տեսչական բարեփոխումների հակակոռուպցիոն դերի և դրանց իրականացման խնդիրների վերաբերյալ. • համապատասխան իրազեկման միջոցով բարձրացնել գործարար հանրության տեղեկացվածության աստիճանը երկրում ընթացող տեսչական բարեփոխումների, ինչպես նաև այլ հակակոռուպցիոն գործընթացների, մասնավորապես, ՔՀԿ Հակակոռուպցիոն կոալիցիայի գործունեության և նրա շուրջ գործարար հանրության կառույցների համախմբման անհրաժեշտության վերաբերյալ. • Երևանում և մարզերում կլոր-սեղան քննարկումների միջոցով ձևավորել տեսչական բարեփոխումների ոլորտում հակակոռուպցիոն միջոցառումների աջակցությանն ուղղված առաջարկություններ:
Ծրագրի բյուջեն (նշել դրամով)	1,000,000 դրամ
Ծրագրի գործընկեր կազմակերպությունը	-

Դիմող կազմակերպության/նների նկարագրություն

«Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամը» ոչ առևտրային և ոչ կառավարական կազմակերպություն է, որը կոչված է իր գործունեությամբ նպաստել և աջակցել Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրական ոլորտի ձևավորմանն ու զարգացմանը՝ ապահովելով բարձրակարգ մասնագիտական օգնություն և օժանդակություն, օգնելով գործարար մարդկանց և կազմակերպություններին կիսելու իրենց գիտելիքները, փորձը և ռեսուրսները, խրախուսելով նրանց զարգացնելու փոխշահավետ համագործակցություն և ամուր գործընկերային հարաբերություններ:

«Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամը» հետամուտ է գործարար միջավայրի բարելավմանը Հայաստանում՝ փորձելով զարգացնել գործարար էթիկայի բարձրագույն չափանիշները, քաղաքակիրթ ձեռնարկատիրական գործունեության լավագույն մեթոդները և գործարարության զարգացման վերաբերյալ առաջադեմ գիտելիքները՝ մեր երկրում կայուն և բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի ձևավորման և ձեռնարկատիրության քաղաքակիրթ նորմերի արմատավորման նպատակով: ՓՄԲՀ-ն հանդիսանում է վերջերս ձևավորված ՔՀԿ Հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ:

Ծրագրի նկարագրությունը

<u>Խնդրի ներկայացում:</u> Մինչ վերջերս կոռուպցիայի հիմնախնդիրը դասվում էր որպես անցումային շրջանում գտնվող նախկին կոմունիստական երկրներում բիզնեսի զարգացման համար վճարելիք գին: Սակայն, Համաշխարհային բանկի և այլ միջազգային կազմակերպությունների վերջին ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ կոռուպցիան էապես դանդաղեցնում է երկրների տնտեսական զարգացման տեմպերը, խոչընդոտում սոցիալական ծրագրերի իրականացումն ու քաղաքացիական հասարակության կայացումը և խաթարում գործարար մրցակցությունը:

Այսօր մասնավոր հատվածը գիտակցում է կոռուպցիայի հետ կապված վտանգը, որը խոչընդոտում է արդար մրցակցությանը, արգելակում է ազատ շուկայի զարգացումը: Կարելի է փաստել, որ կոռուպցիան անհամեմատ ավելի մեծ ճնշում է գործադրում հատկապես փոքր և բիզնեսի վրա: Որոշ գնահատականների համաձայն կոռուպցիայի արժեքը հայաստանյան ՓՄՁ-ների համար կազմում է տարեկան շրջանառության ավելին քան 10%-ը: Ըստ մեզ՝ հայաստանյան ձեռնարկատերերի մեծամասնությունը չի ցանկանում կոռուպցիոն փոխհարաբերությունների մեջ գտնվել: Դա թանկ է, ոչ արդյունավետ և վտանգավոր: Սակայն, միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ ձեռնարկատերերը կոռուպցիային դիմակայելու համար տեղեկատվության և աջակցության պակաս են զգում: Իրենք ստիպված են հանդուրժել երևույթը որպես բիզնեսով զբաղվելու անհրաժեշտ պայման: Մյուս կողմից, հանրային վարչարարության մեջ բացակայում է տնտեսավարող սուբյեկտին որպես «հաճախորդ» դիտելու մշակույթը, որին պետք է խրախուսել և օգել իր գործունեությունը սահմանված պահանջներին համաատասխանեցնելու հարցում: Փոխարենը, փորձագետների գահատմամբ, տնտեսավարող սուբյեկտների և տեսչական մարմինների ներկայացուցիչների միջև փոխհարաբերությունները լուրջ խնդիր են առաջացնում կոռուպցիոն ռիսկերի տեսանկյունից:

Այնուամենայնիվ պետք է հավատալ, որ հայաստանյան փոքր և միջին ձեռնարկատիրության շրջանում կա հիմնախնդրի լուծման եղանակներ գտնելու համար բավարար փորձ և մղում: Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամը առաջարկում է ծրագիր, որը նպատակ ունի ուսումնասիրել կոռուպցիոն դրսևորումները ՓՄՁ ոլորտում՝ տեսչական մարմինների հետ փոխհարաբերություններում և կիրառել հակակոռուպցիոն գործողությունների իրականացման վերաբերյալ մոտեցումների մշակման «վարից-վեր» մոտեցումը:

<u>Ծրագրի նպատակը և խնդիրները:</u> Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել ՓՄՁ հանրության կարողությունների հզորացմանը տեսչական գործընթացներում կոռուպցիոն դրսևորումների դեմ պայքարի գործում, խթանելով վերջինիս համախմբվածությունը և կարևորելով տեսչական ոլորտի բարեփոխումների ծրագրերում հակակոռուպցիոն տարրի ներգրավվածության անհրաժեշտության հարցը: Ծրագրի հիմնական խնդիրներն են.

- ✓ ուսումնասիրել մասնավոր հատվածում տեսչական գործընթացների շրջանակներում առկա կոռուպցիոն դրսևորումների ձևերն ու մակարդակը.
- ✓ բարձրացնել ՓՄՁ հանրության իրազեկության աստիճանը տեսչական բարեփոխումների ընթացքի և դրանց հակակոռուպցիոն ազդեցության կարևորության վերաբերյալ.
- ✓ կազմակերպել քննարկումներ ՓՄՁ հանրության, ոչ կառավարական կառույցների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ տեսչական բարեփոխումների աջակցությանն ուղղված հակակոռուպցիոն մոտեցումների մշակման նպատակով:

Ծրագրի գործողությունները.

Հարցախույզի իրականացում: Ծրագրով նախատեսված հարցախույզը նպատակ ունի բացահայտելու և հստակեցնելու տեսչական ոլորտում կոռուպցիայի երևույթի դրսևորման ձևերն ու մակարդակը և դրա նկատմամբ գործարար հանրության վերաբերմունքն ու դիրքորոշումը: Այս գործողությունը կսկսվի հատուկ հարցաշարի մշակմամբ: Օգտագործելով իր ունեցած նմանատիպ փորձը, ՓՄԲՀ-ն այս հարցումը անցկացնելու համար կայցելի մարզեր և դեմ առ դեմ հանդիպումներ կանցկացնի ՓՄՁ հանրության ներկայացուցիչների և գործարարությանն աջակից կառույցների հետ: Հարցվողներին ավելի ազատ և անկաշկանդ պատասխանի հնարավորություն ընձեռնելու նպատակով հարցումը կկրի անանիմ բնույթ: Մոտավորապես 70-75 ձեռնարկատերեր Երևանում, Տավուշի և Վայոց Ձորի մարզերում կմասնակցեն հարցմանը: Հարցախույզի մասնակիցներին կխնդրվի արտահայտել նաև իրենց կարծիքները տեսչական ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության վերաբերյալ: Հարցախույզը նպատակաուղղված է նաեւ հետագա հակակոռուպցիոն միջոցառումների շրջանակներում համապարփակ տեղեկատվական ծրագրի մշակմանը՝ դարձնելով այն հակակոռուպցիոն բարեփոխումների համար տարբեր քննարկումների հիմք: Հարցախույզի կարևոր խնդիրներից մեկը կլինի երկրում ընթացող տեսչական բարեփոխումների իրական գնահատումը հակակոռուպցիոն նշանակության տեսանկյունից, որը կօժանդակի որոշում կայացնողներին համապատասխան շտկումներ մտցնել բարեփոխումների ռազմավարության մեջ:

Կլոր-սեղան քննարկումներ և իրազեկում: Ծրագրի իրականացման շրջանակներում ՓՄԲՀ-ն կկազմակերպի կլոր սեղան քննարկումների շարք՝ ՓՄՁ համայնքի ներկայացուցիչների և գործարար միությունների մասնակցությամբ: Այդ քննարկումները ուղղված կլինեն ինչպես հակակոռուպցիոն տեսանկյունից տեսչական բարեփոխումների վերաբերյալ գործարարների իրազեկության բարձրացմանը, այնպես էլ տեսչական բարեփոխումների արդյունավետ իրականացման նպատակով գործարար համայնքի ներուժի համախմբմանը: Մոտ 20-25 մարդ կմասնակցեն յուրաքանչյուր կլոր-սեղան քննարկմանը, ներառյալ տարբեր գործարար ասոցիացիաների և ոչ-կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներին:

Կլոր սեղանները ասպարեզ կհանդիսանան ակտիվ երկխոսությունների համար, հնարավորություն ընձեռնելով մասնակիցներին արտահայտելու իրենց տեսակետները տեսչական բարեփոխումների արդյունավետության վերաբերյալ և կծառայեն որպես կատալիզատոր հակակոռուպցիոն մոտեցումների քննարկման և մշակման համար: Կլոր-սեղանները կծառայեն որպես ֆորում՝ արտահայտելու համար մասնավոր հատվածի տեսակետները և վեր հանելու այն խնդիրները, որոնց նրանք առնչվել են տեսչական ոլորտում առկա կոռուպցիոն դրսևորումների ժամանակ:

Ծրագրի գործունեության կարևոր խնդիրներից է համապատասխան ունկնդիրների շրջանում հակակոռուպցիոն գործընթացների վերաբերյալ տեղեկատվության տարածումը: Տարածվող տեղեկատվության վերաբերյալ քննարկումները կնպաստեն տեսչական բարեփոխումների իրականացման վերաբերյալ քաղաքական և սոցիալական համաձայնության ստեղծմանը:

Միևնույն ժամանակ քննարկումները կտրամադրեն մասնավոր ձեռներեցությանը և ՀԿ սեկտորին տեսչական բարեփոխումների ոլորտում հակակոռուպցիոն ծրագրերի և նախաձեռնությունների վերաբերյալ թարմացրած տեղեկատվություն և գիտելիքներ, որոնք հնարավորություն կտան նրանց ավելի արդյունավետ գործելու ընդդեմ կոռուպցիոն երևույթների:

Հարցախույզի և կլոր-սեղան քննարկումների արդյունքների ամփոփում և առաջարկությունների փաթեթի պատրաստում: Տարբեր տեսակետները եվ առաջարկությունները, որոնք կհնչեն կլոր սեղանների ժամանակ մասնակիցների կողմից բարձրացվող հարցերի վերաբերյալ, կծառայեն որպես հիմք տեսչական բարեփոխումների ոլորտում ՓՄՁ շահերի պաշտպանության հակակոռուպցիոն նախաձեռնությունների մշակման համար: Առաջարկությունների վերջնական փաթեթը կներկայացվի Էկոնոմիկայի նախարարության Տեսչական բարեփոխումները իրականացնող թիմին:

Ծրագրի արդյունքների ամփոփում և գնահատում: Նախատեսված ծրագրի վերջնական էտապում կիրականացվի վերջնական արդյունքների գնահատում, որը հնարավորություն կտա ստանալ նախատեսված նախաձեռնությունների ազդեցության պատկերը: Գնահատումը կարտացոլվի եզրափակիչ հաշվետվության, ձեռքբերումների, անհաջողությունների և քաղած դասերի ֆորմատով: Վերջնական հաշվետվությունը, ներառյալ ծրագրի շրջանակներում իրականացրած գործունեության վերլուծությունը և արդյունքների գնահատականը, կներկայացվի դոնոր կազմակերպությանը:

Ծրագրի գործողությունները կիրականացվեն Երևանում, Տավուշի և Վայոց Ձորի մարզերում:

Ծրագրի շահառուները: Ծրագրի ուղղակի շահառուներն են ծրագրի միջոցառումներին և գործողություններին անմիջաբար մանակցող փոքր և միջին ձեռնարկատերերը, ձեռնարկատիրությանն աջակից կառույցներն ու գործարար միությունները: Ծրագրի անուղղակի շահառուների քանակը ներկայումս կազմում է մոտ 74,000 փոքր եվ միջին ձեռնարկություն (համաձայն «ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի» տվյալների):

Ծրագրի իրականացման մեթոդոլոգիան: Վերը շարադրված խնդիրների առավել արդյունավետ լուծման համար ծրագրի իրականացման մեթոդոլոգիան ենթադրում է ծրագրի իրականացման ողջ ընթացքին մասնավոր հատվածի անմիջական մասնակցություն: Ծրագրի առանձնահատկություններից է նաև համակիր կազմակերպությունների հետ լայն համագործակցությունը: Դրանց թվում են բիզնես ասոցիացիաները, ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական և մարզային մասնաճյուղերը, Հանրապետական և մարզային առևտրա-արդյունաբերական պալատները, Գործարար շահերի պաշտպանության ցանցը (ԳՇՊՑ) և այլ բիզնեսին աջակցող կազմակերպությունները:

Ծրագրից ակնկալվող արդյունքները: Ծրագրի ազդեցության իրական ցուցանիշները ծրագրի ազդեցությունը գնահատելու համար կներառեն գործողություններից յուրաքանչյուրը և կարտահայտեն այդ ազդեցությունը ծրագրի յուրաքանչյուր հատվածում: Սույն ծրագրի համար նախագծված հիմնական ակնկալվող արդյունքներն են.

- Տեսչական բարեփոխումների իրականացման վերաբերյալ գործարար հանրության իրազեկվածության բարձրացում.
- ՓՄՁ հատվածի համախմբում և նրա կազմակերպությունների ակտիվ ներգրավումը հակակոռուպցիոն գործընթացներում.
- Տեսչական բարեփոխումների հակակոռուպցիոն արդյունավետության բարձրացմանն ուղղված ՓՄՁ հատվածի կողմից ներկայացված նախաձեռնությունների առաջարկներ, որոնք կներկայացվեն Էկոնոմիկայի նախարարություն:

Ժամանակացույց

Շաբաթ	Գործողություն
1-ին	Ծրագրի մեկնարկի համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների իրականացում, ծրագրի աշխատակազմի ձևավորում
2-րդ	Հարցման համար անհրաժեշտ հարցաթերթիկի պատրաստում և փորձարկում
3-րդ	Հարցման իրականացում Վայոց Ձորի մարզում
4-րդ	Հարցման իրականացում Տավուշի մարզում
5-րդ	Հարցման իրականացում Երևան քաղաքում
6-րդ	Հարցումների արդյունքների ամփոփում
7-րդ	Կլոր-սեղան քննարկման կազմակերպում և անցկացում Վայոց Ձորի մարզում
8-րդ	Կլոր-սեղան քննարկման կազմակերպում և անցկացում Տավուշի մարզում
9-րդ	Կլոր-սեղան քննարկման կազմակերպում և անցկացում Երևանում
10-րդ	Կլոր-սեղան քննարկումների արդյունքների ամփոփում
11-րդ	Քննարկումների արդյունքների հիման վրա առաջարկների մշակում և ներկայացում Էկոնոմիկայի նախարարությանը
12-րդ	Ծրագրի վերջնական հաշվետվության պատրաստում և ներկայացում

Բյուջե

Միավոր	Միավորի համար	Միավորի գին	ՀԵԻԱ-ից պահանջվող գումար	Ներդրման գումար	Ընդհանուր
1. Աշխատակազմ (ծրագրի աշխատակազմ աշխատավարձ և փորձագետների հոնորարներ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերն ու պարտադիր վճարները)					
1.1 Ծրագրի տնօրեն	3	110,000	330,000		330,000
1.2 Ծրագրի հաշվապահ	3	90,000	270,000		270,000
1.3 Հանրության հետ կապերի գծով փորձագետ	3	90,000	270,000		270,000
2. Ճանապարհածախս			20,000	50,000	70,000
3. Գրասենյակային պարագաներ			20,000	50,000	70,000
5. Այլ ուղղակի ծախսեր /գրասենյակային ծախսեր, նյութերի բազմացում,միջոցառումների կազմակերպում և անցկացում/			60,000	200,000	260,000
6. Ընդհանուր ուղղակի ծախսեր (տողեր 1-5)			970,000	300,000	1,270,000
Ընդամենը			**970,000**	**300,000**	**1,270,000**

Գայանե Պողոսյան
ՓՄԲՀ տնօրեն